

զիր մը չը պարզուիր, որոշ գիծերով թէ և միաժամանակ Միտհաթի Սահմարութեան անունն ալ չը տրուիր։ Սակայն այս ալ հաւանաբար այն համոզումին պատճառովն ըլլալու է որ այսօր ունին Հայերն ու Մակեդոնները գէպի թուրք սահմանադրութիւնը։ որուն բնոյթը և գոյնը որակող մէկէ աւելի գրուածքներ հրապարակուած են արտասահմանեան թերթերու մէջ։

Երեկ չէ՞ր տակաւին որ Տոմատ Մահմուտ փաշա փաղաքական նամակով մը անդուգական հայրենասէր կ'անուանէր և իր խորունկ յարգանքն ու հիացումը կը յայտնէր Ահմէտ Ռիզային որ Սուլթան համարը հրապարակու աւագարացնել ելաւ։

Այլ գաղտնիք մը չէ թէ յիշոն թիւրքի ալ և ալ խմբակները, Տոմատ Մահմուտ փաշա և Ահմէտ Ռիզա մէկ ծրագիր ունին տն է «սահմանադրութիւնը»։

Ծանօթ կոչին մէջ անհարկութիւն մ'ալ կայ, թուրքիստանի քրիստոնեայ ազգերու անկախ ըլլալու հարցին գէմ ճիշդ Ահմէտ Ռիզայի գաղափարը։ Ու փաշա զատենքը կաւեցնեն թէ այդ ազգերու անկախ վիճակ մը ունենալը իրենց փճացումին և կորստեանը պիտի ծառայէ։ Ու այդ կէտին վրայ ծանրացած, մէկ քանի ալ տկար տեսութիւններ մէջտեղ բերելով կը հրաւիրեն մէկ մարմին կազմել։

Պահ մը ընդունին որ ազգերու անկախութիւնը իրենց գոյութիւնը պիտի վտանգէ, սակայն միեւնոյն արդիւնքը անխուսափելի օրէն ալ թուրք սահմանադրութիւնը պիտի տայ ալ աւելի յոռի պայմաններու մէջ։

Փաշազատէ՛րը սխալ ըմբռնած են անկախութեան կամ ինքնավարութեան տարիք արդիւնքը։ Թուրքիստանի ժողովուրդներու միացմամբ Սահմանեան կայսրութեան մը պահպանութիւնը, ինչ որ կ'առաջարկեն Տոմատ փաշայի տղաքը ստույգ է թէ արեւելքի մէջ քաղաքականագէտ կարեւոր ուժի մը գոյութիւնը կը ըլլայ։ Սակայն իրենց մտաւորաբար ընտրած վարչական դրութեան մը շատ տարբեր դրութիւնով մը եթէ կազմուի այդ ուժը ոչ թէ իրենց ուզած ձեւովը։

Այդ մասին անցեալները Մահմուտ փաշայի մէկ կոչին առթիւ տրուած պատասխանին և թուրք քիւ ինչպէս կընայ փրկուելու վերնագրով գրութեան մը մէջ խոսուած հարկ եղած մանրամասնութեամբ։

Սուրի

ԱՆԿԵՂԾ ԸԼԼԱՆՔ

Համանակէ մը ի վեր Պոլսոյ «Արեւիք» և Վառնայի «Շարժում»-ը, ինչպէս ալ իրար գտեր են, բերան բերնի տուած Պոլկարիոյ այցելու հովիւ Գեր. Բարթոլոմէոս Ծ. վրդ. Պաղծանի մասին գանգատներ, բողոքներ կընեն, ապիկար ուսմունքի և «յառաջդիմութեան թշնամի» ժողովարդը «եկեղեցիէն պաղծանող» ներկայացնելով զայն։

Կուսակցամոլութիւնը, որ մէկ քանիներու մինչեւ ծուծը մտեր է, խառնուելով բարքերու հասարակ անաղնուութեան մը հետ, զիշեր ցորեկ կը տառապեցնէ այդ անշահ միտքերը, իրենցմէ դուրս յանցաւոր մը գտնելու համար այն բոլոր յետադիմութեան և վրան բաց թերութեանց ու զեղծումն թու ուրոնք Պոլկարահայուն ազգային հորիզոնը կը մթագնեն զգալի կերպով։

Եւ ո՞րու գտնել յանցանքը, չէ մի որ պոլկարահայր եկեղեցական բարձրագոյն պաշտօնատար մը ունի այսօր, ո՞վ անկէ աւելի պատասխանատու կրնայ ըլլալ այս ա մեղքին։

Ահաւասիկ ապշութեան գերագոյն աստիճանը։

Չէ մի որ Պոլկարիա այցելու հովիւ մը ունի, չէ մի որ պոլկարահայր դպրոցները անախտանքի վիճակ մը ունին, չէ մի որ աղագային վարժարաններու մէջ աշակերտը ընդհանրապէս իրենց կեանքի թանկագին վայրկեանները կը մեռցնեն, չէ մի որ մեր արժանապատիւ Տէր պապաները իրենց ամենէն լղճուկ շահատակութիւնները չեն մոռնար ի գործ դնել թէ եկեղեցւոյ շրջափակին մէջ ու թէ դուրսը հաւատարմագէտ և չէ մի որ վերջապէս դրամական մեծ տաքնապ մը պոլկարահայուն ահաւասիկ մղձաւանջը կը ըլլայ, բնական և անվիճելի է ուրեմն թէ այս ամենուն պատճառը Պոլկարիոյ այցելու հովիւն է։

Ազգային գործերու մէջ ընդհանրապէս և ազգային հաստատութիւններուն հանդէպ մտնաւորապէս, պղատոնական վերաբերուիլը հասարակային կեանքի ամենէն հասարակ յատկանիշը կը կազմէ այն մէկ քանիներուն որոց կարգէն են անշուշտ «Արեւիք»-ի թղթաւորը և «Շարժում»-ի խմբագիրը և որոնք իրենց գոհնակի պոռն տուքներուն մէջ կը մոռնան տրամաբանութեան ամենէն տարրական կէտերը։

Ինչ կուզեն այցելու հովիւն մը հրաճ, որպէսզի մեր դպրոցներու մէջ սզդեղ և իրենց հաստկաշին աւելի հաստցնելու ելլող մակարոյժ, տգէտ, ապիկար ու սուցիչները ակնթարթի մը տեսնուին։

Պոլկարիա մէջ ապագայ սերունդներու պատշաճ կրթութիւնը տալ կարողացող, փորձ և հմուտ անձնութիւն մը, բայց չէ՞ որ հրաճ քիւ արեւը գանցած են։

Ինչ կ'ապասէին այցելու հովիւն մը։ Կ'ապասէին որ մեր եկեղեցիները պրոպագանդիստական դարձնող շնորհունակ կղերականներուն վրայ իր հրաշագործ զօրութիւնը տարածելով անոնք ամենքն ալ կարգի բերէր, ուղղէր շտկէր։ Կէ՞ր ըրալէի մը մէջ։

Ինչ կը յուսային այցելու հովիւն և, կը յուսային որ անկախ միջոցներ պիտի բերէր հետը ու պոլկարահայր եկեղեցիներու և դպրոցներու տարիներէ ի վեր դիզուած, կուտակուած տոկոս տոկոսի վրայ բարգուծած պարտքերը պիտի տար, երկրին դրամական տագնապը պիտի վերցնէր։

Եւ եթէ Պոլկարիոյ Այցելու հովիւն ասանկ գերբնական հրաշագործութիւն մը զրկուած է, եւ եթէ անկախ այս պատճառաւ ալ «ապիկար», «ուսմունքի և յառաջդիմութեան թշնամի» է, «ժողովարդը եկեղեցիէն պաղծանող» մեր ո՞ր են ուսմունքի և յառաջդիմութեան կարապետները, ժողովուրդը եկեղեցիէն հետ տաքցնող ու առաքելները ո՞ր են, ուր պատահուին։

Առանց ժողովուրդին օժանդակութեան և առանց անոր ձեռնառնութեան, լոկ Պաղծան մը, տարիներէ ի վեր խմբը աւելած Պոլկարահայ գործերուն ինչ պիտի կրնայ ընել, եւ լուսաւորութեան այդ շրջանակները որոնք ամբարներու պոռնան փշոզ կամ յառաջդիմութեան անունով յետադիմութեան պոչին ամուր մը փակ չող թերթերու սխեմաները կը սեւցնեն։ Ինչու չեն բողոքելիր

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՒՅԵՐ [37]

(ՊԱՏԿԵՐ ՄԵ ՏԱՃԱՎԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱՆ ԿԵԱՔԷԼ)

Ու եթէ մէկը հետաքրքրուէր ան հակառակորդական օրերուն անոնց կեանքով, պիտի հիանար այն անկեղծական ընթացքին ու նրա թափան առիւնքի վրայ, որ իր կոչման ընդունակ պարզ ուսուցիչ մը, ու զաւարակական քահանայ մը գոյացուցած էին հոն։ Հայ կիներ իր պարզութիւնով ու պարկեշտ աշխատութիւնով, օրինակելի դարձած էր. ու անոնցմէ շատերը «Համերաշխութիւն» ընկերութեան անդամակցելով, պարծոն պերքով կը մասնակցէին իրենց գիւղի զարգացման ու ինքնապաշտ պանութեան շրջապատ գործին։

Հայ կիներ, իր հոգեկան բոլոր գեղեցկութիւններով ճանչնալու ու իմաստասիրելու համար, պէտք է Հայաստանի գեղջուկ կիները ու մայրերը լաւ ճանչնալ։ Երեսկան հայ կիներ, բարձր սարքերու վրայ ծլած ինքնաբոյս ծաղիկներուն կը նմանի, որոնք, որքան ալ անխնամ ու անձնամոխի մեծնան, այնքան բնական ու իրական աւուշ հմայքներով ու գոյներով օժտուած կը ըլլան։

Իրեւ մայր, քոյր, ամուսին և զարկուն, գիւղացի հայ կիներ, իր առանձնապատկութիւններով գերազանցապէս յարգելի է։ Անիկա չունի անկեղծ, կապկային անբնական ձեւերն ու լեզուները, որոնք քաղքէնի ու սալոնի կնոջ թունաւոր ու պատրուկ օձային ուժերն են։ Անոր սիրտն ու հոգին բնութեան մաքուր դպրոցի ծոց անարատ

մեծցած ու զարգացած, իր մայրիկէն ու մամիկէն ինչ որ տեսած ու սովորած է, հաւատարմաբար սերունդէ սերունդ կը կտակէ անիկա։ Հաւատարմութիւն, հնազանդութիւն ու անձնութիւն գիւղացի հայ կնոջ խաչաքաներն են։

ԾԳ.

Գուրգէնի ու Տէր Վահանի աքսորուելէն բաւական ժամանակ վերջ, անոնց յայտնի ստորագրութիւնները կը ող նամակով մը. Մանուէլ Մամիկոնեան անունը երկտասարդ մը Գ. գիւղը կը մտնէր։ Աւելորդ է ուրուագրել ան խառն ու յուզումը զոր կուսինայ այն գիւղի ամբողջ ժողովուրդը, իրենց անձնագոհ աքսորուածներէն նամակ ըստանալուն հետ միանգամայն, Գուրգէնի գաղափարակից կարծիք երկտասարդ մը ներկայութիւնը վայելելով։ Գուրգէն ու Տէր Վահան ա'տ նամակով իրենց ամբողջ ըլլալը յայտնելէ ետք, քանի մը տողով Մանուէլ Մամիկոնեանը, ամեն տեսակէտով վստահելի ու համակրելի իր սիրտը երկտասարդ մը կը յանձնարարէին իրենց հայրենակից-ընկերներուն։

Տարածոյ Վ. գիւղէն 27-28 տարու միջահասակ, հայկական անաղարտ գիւղացիով, առնական կորովի իրանով ու սիրուն կազմուածքով համակրելի երկտասարդ մէր Մանուէլ Մամիկոնեանը, որը իր պատանեկութեան օրերուն իր հօր հետ է. Պոլիս մեկնած էր, հոն իր դպրոցական ընթացքը լրացընելու համար։ Ղալաթիոյ հին կեդրոնական վարժարանի մէջ Գուրգէնի աշակերտակից ու գաղափարակից ըլլալով, անոնց մէջ հոգեկան ամուր կապ մը հաստատուած էր, ու ատ երկու սրտերը եղբայրական ամենէն սուրբ սիրով իրարու կապուած է։

Ինչ Գուրգէն Պոլսէն հեռանալով Հայրենիք վերադարձած ու Մանուէլ Պոլիս մնալով, շարունակած էին իրենց եղբայրական կապը աւելի ամրապնդել անընդհատ թղթակցութիւններով։ Գիւղէն ամեն շաբթու — գետ Գուրգէն, չձերբակալուած — իրարու հետ կը թղթակցէին։ Ու Գուրգէն, իր թղթակցութեանց շաբթին մէջ, իրական գծերով Հայրենիքը իր բոլոր խաւերով կը ներկայացնէր Մանուէլին։ Շատ պարզ ու յուզիչ ոճով մը կը նկարագրէր ան դարձն ու կրօնը ցաւերը, որոնք Հայաստանի ժողովրդեան կեանքը ընդհանրապէս ու հայ գիւղացիին մասնաւորապէս կը թունաւորէին ու կը փճացնէին։ Մանուէլ, Գուրգէնի ա'տքան թելադրական նամակներէն ու կենդանի օրինակներէն ներշնչուած, կը կազմէր իր յարգական աշխատակցութեան նրա ինքնընտրած, որ ինքնուրոյն մը ինքնատիպ հայաստանցի իրական գրողի մը հաւանաբար չինած էր ան ատենուան Պոլսական ձեւապաշտ ու անհարգաւոր դրամականութեան մէջ։

Մանուէլ իր արտաքոյ կարգի գործունէութիւնով ու հայրենասիրական անգոյսը եռանդով, Պոլսոյ ազգային գործիչներու ջանքաւոր անկի մէջ տեղ մը բռնած էր։ Մտերմացած ու ծանօթացած էր 89-ին 91-ի ամենէն սուրբ ու անձնուրաց յեղափոխական գործիչներու հետ։ Աս պարագան մղած էր զինք անվերջ մասնակցելու 1890 յուլիս 15-ի Գուրգէնի յեղափոխական անդամներէ ջոյցին։ Աս ջոյցին մէջ, իր ամենէն մտերմն ու իր հրահանգին անկեղծօրէն հետեւող եղած իր նազարէթ Լուսինեան, Սեփաւորացի պարզ, պարկեշտ, մաքուր ու յեղափոխական կորովասիրտ շինական երկտասարդը։ (Շար.)

փաղճեան վարդապետի շուրջը երբ նա եկեղեցւոյ բնակէն շարունակ թէ հրապարակաւ և թէ մասնաւոր հրաւերներով, ամեն օր, մեր վարժարաններու ամուլ վիճակը բարելաւելու համար խորհրդակցելու կը կանչէ իրենց պէսերը:

Յառաջդիմութեան պատգամաւորներուն թիւը տեսնենք, ինչո՞ւ տնոնք լոյս արեւուն չին գար. ո՞րմէ կ'աժնան, ինչո՞ւ հրապարակ չեն ելլեր, ո՞ր օրուան կըսպասեն. իսկ մենք, անարժանաբար խորհուրդ կուտանք Գերապատիւ այցելու հովիտի որ առանց կարեւորութիւն տալու անճարակ խմբաւորներու և թղթակիցներու թուղթ մորտկուն, շարունակէ իր շահաւէտ գործունէութիւնը խղճի և արդարութեան կշիռը ի ձեռին:

Դրանք Հայրերն:

Մարտ 10 Ֆիլիպէ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

(Մեր մտանաւոր քղաքական)

Սօֆիա 15 մարտ

Կերեւի հարկ դատած էր կառավարութեան սպորէն նկատուած երեսփոխանական ընտրութիւններէն գոնէ մի քանին ցարդ 7, ամենքն ալ հակառակ կուսակցութիւնէն բնական և ապա ուղղութիւն վիճաբանութեան սկսիլ. ասոր համար ալ հակառակ ամեն ակնկալութեանց հարաւոր օր անցաւ ժողովը այս օրակարգին և չորս նիստով ալ լիցցուց:

Ինչպէս ըսած եմ արդէն ուղիւր ձը լեղաշըջումն է գահաճառին, միայն սա տարբերութեամբ, որ էն վիրջը գահաճառանգին հիւանդութեան և առողջութեան մի քանի տողեր նուիրուած են, թէ չէ նոյն ջերմ փափաքը Ռուսիոյ հետ լաւ յարաբերութեան մը կապերն ասրապնդել լաւ յարաբերութիւն ունենալ հետ և դրոցի տէրութեանց հետ մասնաւորապէս Սերպիոյ հետ կապ արդեօք դաշնադրութիւն մը Ռուսիոյ, Սերպիոյ և Պոլիարիոյ միջև, թէ այս շարժումներ նախնական քայլեր են, ճշգրիտ խօսք նորէն չկայ. Մէլ համէ էֆէնտիին հրամայեցած թէ յերբ ու կերցուցած խորհիկները ազգեցութիւն չեն ըրած կամ գիտ մամուլ այսպէս կը շարժին մեր յինք Սուլթանէն նշաններ փրցնելու համար, զի իրենք ալ պիտեն որ արդի պարագային մէջ բան մը չեն կրնար խնայել Սակեղանիոյ համար և ուրիշ պատճառ մ'ալ չկայ այսպէս շարժելու:

Թիւրք երեսփոխաններուն ալ դպելով սոյն լուծիւնը, մէկը պիտի տուաւ թէ ի՞նչ պատճառաւ բնաւ թուրքիոյ յիշատակութիւնը չկայ ոչ գահաճառին և ոչ ուղիւր ձին մէջ. մինչդեռ բնաւ ուրիշ տեսնելու բնական խօսքեր կը շնայ լուծիւն Սուլթանին և նորա կառա

վարութեան տեսլիւնով, որ Սերպիոյ Պոլիարիոյ պատերազմին և վերջերս ալ Ռուսիոյ Պոլիարիոյ միջև դէպին յաջող և պատուաբեր արդիւնքը միայն Սուլթանին բռնած իմաստուն քաղաքականութեան կը պարտինք եղեր:

Այս թիւրք հասկցած չէ՞ արդեօք ատկաւին, որ այլ եւս թիւրքին պէտք չունինք, բանի որ հաշտ ու բարեկամ ենք Ռուսիին հետ և թէ այս կը պահանջէ արդի քաղաքականութիւն. չուննանքամ իրեն պատու մը հաց տըւողին առջիւ պոչը կը խաղցնէ:

Թող սպասեն միջին նորէն զբոսնելու և յայնժամ նորէն կը չորհորթենք Սուլթանը:

Սոյն թուրքին պատասխան տրուաւ միայն անկախ երեսփոխան մը, թէ Սակեղանիոյ տրգի վիճակին մէջ աւ Սուլթանն չնորհակալութեան պէտք մը չզգար Պոլիարիոյ:

Նախարարապետն ու արտաքին գործոց նախարարն ալ խօսք առին և իրաւամբ կըսպասուէր, որ ներքին և արտաքին քաղաքական նութեան մէջ կառավարութեան բռնելիք ուղղութեան վրայ իրենց հայեացք պարզեն, մասնաւոր Սակեղանիոյ նկատմամբ, սակայն ես երկուքին խօսքերուն մէջ ալ նոր բան մը, նոր գաղափար մը չ'ըմբռնեցի. սովորական խօսքեր. ապահով ժողովրդեան կեանք, խնայողութիւններ ընել, կուսակցութիւն չխառնել մասնաւորապէս պաշտօնէից ընտրութեանց մէջ, այլ կարողները գործի դնել. թէ և միւս կողմանէ ալ տեսիլ կարող և փորձառու պաշտօնեաներ կը հանեն և իրենց մարդիկ կը կարգին ու ասոր վրայ խօսող չկայ. և ո՞ր կուսակցութիւն այս պնդեցիկ խօստումները չըրաւ ի սկզբան և ցմիշտ հաւատարիմ մնաց իր խօսքին:

Երեսփոխաններէն ոմանք միայն խօսեցան Սակեղանիոյ վիճակին վրայ, ցաւ յայտնեցին և պահանջեցին կառավարութեանէն, որ Պէրլինի դաշնագրութեան 23րդ 10 դրածին գործադրութիւնը իրաւ գործելու հետամուտ լինի:

Նախարարք պաղափար մը չը յայտնեցին. լուծիւն պահեցին:

Թէ այս խօսքեր և շարժումներ կուտան արդեօք արձագանք ի Պոլիս. Սուլթանը կարեւորութիւն պիտի տա՞յ Պոլիարի Սպարանիէի մը մէջ խօսուածներուն և յայտնուած կարծեաց, այն Սուլթանը որ 78էն ի վեր ակամջ չկայինք ոչ ներքին բողոքներու և ոչ Անգլիոյ փարլամենթին մէջ յայտնուած սուր դիտողութեանց և ընդհակառակը Սուսունի ջարդին յետոյ հայաստանի և Պոլսոյ ջարդերը հրամայեց:

Սակեղանական գոմիդէն որ ամսոյ 18ին ընդհանուր ժողով պիտի գումարէր, յետագած է յուլիսին, ճնշման թէ խոստման մը

ներքեւ, թէ չ'ուզեր աւելի կատգեցնել տաճիկը, որ մի՞ գուցէ Հայ կական ջարդերը տեղի ունենան և ի Սակեղանի հանգչալ անգղայ և անտարբեր Եւրոպայի:

Թիւրք կառավարութիւնը կուզեն դիւանագիտորէն գործել եւ ոչ թէ բռնի ուժով, քանի որ պատերազմէ կը խրտչին և շատ պարզ է որ գիւանագիտորէն ալ շատ բան կարելի է ընել միայն թէ «Եւրոպա ուզէ ու միանայ»:

Ահա բուն խնդիրը, պիտի կըրնայ միտնալ Եւրոպա թէ չէ. Սուլթանը նորէն ազատորէն պիտի գործէ:

Շիտակը լաւատես չեմ ես, դիտեցեալը քաջայերական չէ, քանի որ Եւրոպայի մէջ կը հրամայէ և կ'իշխէ «ես»:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ստացանք Գոռքան երկրագործական հանդէսին Բ. թիւն ալ (փետրվար): Ուրիշ ենք որ «Գոռքան» իր կեանքի արշալոյսին մէջ արդէն սկսած է օտար գիտուններու համակրութեան և բաշխելու թիւնը արժանանալ: Յրանալի հողագէտ ճարտարագէտներու ընկերութիւնը համակրելով «Գոռքան» ծրագրին և ուղղութեան 100 ֆրանք նուիրած է Պ. Քէյ. չէր հրաւիրած է Պ. Մեծատուր. եւս խուզարկութիւններ կատարելու և իրեն հետ արեւելեան կաթնազորութեան վրայ ուսումնասիրութիւն մը պատրաստելու, Յրանալի Ակադեմիաներուն համար: Բրոֆէսոր Ըսքրիպօ սերմերու կալանի տնօրէնն ալ տրամադրած է իր աշխատանքը Գոռքանի տնօրէնին սերմերու և հուշետերու վրայ խուզարկութիւններ կատարելու: Պ. Վիլբուշէվիչ Ռուս մասնագէտը ինքնաբերաբար «Գոռքան»ի աշխատակցի խոստացած է Պ. Ա. Չօպանեան ևս իր տառերը տրամադրելի ըրած է:

Այս նպատակաւ պայմաններու տակ կը յուսանք որ Պ. Մեծատուրեան ասկէ վերջ մասնաւոր կանաւարութեամբ հրատարակէ իր օգտաշատ հանդէսը, որուն այս Բ. թիւը նախորդէն աւելի մեծ ծաւալ ունի և կը պարսնակէ ի մէջ ալլոց հետեւալ օգտակար յօդուածները ու տեղեկութիւնները: Գետնախնձորը պահել, Հողագործութիւնը ԺԸ-րդ դարուն վերջը, Կիրիւրը: Կիւիւրու արուեստը: Հայկանիւնը: Երկրագործի ամսացոյցը: Ցաքանը: Երանապահ: Ներու խրատ: Ծաղկի բժշկութիւնը մեղրով: Մամուլը և մարմնոյ կըտրուածքները: Զուրի ազգեցութիւնը կաթի քանակութեան վրայ:

Հանդէս ընկերվարական ամսագրին 4—5 թիւերն միատեղ ստացանք, որ հետեւեալ յօդուածները կը պարունակէ:

1. Եւրոպայի հայ ուսանողութիւնը,
2. Հայկական իրականութիւնը,
3. Սօցիալիզմ (թէօրիա տաքտիք)
4. Սօցիալիզմ և գիւղացիներ ժ. Ժոնէս
5. Երկրագործութիւնը հայ ժողովուրդի մէջ:

6. Թղթակցութիւններ
7. Անհրաժեշտ ուսումնասիրութիւն:
8. Բուրժուական և Սօցիալիզմ.
9. Սօց. միջազգային հինգերորդ կօնգրէս:

Տաւատ Մահմուտ փաշայի երկու որդիներուն կողմէ ընդհանուր Օսմանեան հպատակներուն ուղղեալ կոչ մը ստացանք թուրքերէն և Յրանալիէն զատ զատ տետրակներով:

Սուլթան Մէճիտի այդ երկու թուրքերը թուրքիոյ բոլոր ազգերը ու ժողովուրդները կը հրաւիրեն միանալու ներկայ բռնակալ վարչութեան դէմ:

Միշտ հին երգը, առանց գործնական նոր քայլ մը առնելու:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատրիարքարանի Կրօնական ժողովը որոշիւ է Երուսաղիմայ Պատրիարքական փոխանորդ Տ. Գէորգ Եպիսկոպոս Երեցեանը Ռուսանիա խրկել. որպէսզի այն տեղի հայոց վիճակը լաւ մը ընէ և տեղեկագրէ. և այսուհետեւ հոգևական միայն պաշտօն մը պիտի հաստատուի Ռուսանիոյ մէջ:

— Սերաստիոյ առաջնորդ Տ. Պետրոս արք.— Եպիսկոպոսի բաւական հիւանդ ըլլալը կիմացուի: — Զատիկ առթիւ Պոլսոյ Ազգ. վարժարաններու արքատ աշակերտներու շինուելիք զգեստներու ու կօշիկներու համար բաւական յանձնարարութիւններ եղած են Ազգ. Հիւանդանոցի Որդանոցին:

— Բաղէշի մէջ Միսիոնար Մըսթըր Ճօրճի նախաձեռնութեամբ 50 ոսկւոյ գումար մը հանգանաւորելով նոյն քաղաքի խնդրակատարի որդանոցին կահագործութեան, դիւանագիտութեան վերաբերեալ մեքենաներ և գործիներ բեւել տրուած է:

— Տրապիզոնի գաւառական երեսփոխանական ժողովը իր վերջին նստին մէջ վիճակին առաջնորդ ընտրի է Մուշի նախկին տեղապահ Տ. Բաբկէն Ծ. վարդապետը:

ԲԱՌԳԻՐԻ ՑԻՄՆԱՆՈՒՄ

Ամբողջ գործը երկու շաբաթ հատուկ պիտի բաղկանայ, որոնց առաջինը արդէն ստացած ենք: Այս հատորը 1060 մեծագիր երեք սիւնակնոց էջերէ բաղկացած է. գինն է 25 ֆր. ոսկի. երկրորդն ալ ի մօտոյ պիտի հրատարակուի նոյն գնով:

Կարժէ որ ամեն գրասէր ազգային ունենայ. ստանալ փափաքողք թող գիմեն մեծանուն մատենագրին. Իշ. Դ. Լուսինեան 108 ամ. քը Նեպոլի, ա Նեպոլի սիւն/Սիւն (Յրանա) կամ «Հայկի» խմբագրութեան վառնա

